ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ.

ԼՈՒԻԿԵՐ

ՀՈԳԵԼՈՅՍ Տ. ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԸ ՎԱՅԵԼ ՇՈՒՔՈՎ ՈԳԵԿՈՉՈՒԵՑԱՒ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի (չորս տարի) եւ Արեւելեան Թեմի (24 տարի) Առաջնորդ եւ Երուսաղէմի Առաքելական Աթոռի 96-րդ Պատրիարք (23 տարի) Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի յիշատակի ոգեկոչման նուիրուած հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, Փետրուար 9, 2014, Ս. Վարդան Մայր Տաճարին եւ Առաջնորդարանի Հայկ եւ Ալիս Գավուքճեան հանդիսասրահին մէջ:

Առաւօտեան ժամը 10:30-ին հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ: Օրուան պատարագիչն ու քարոզիչն էր Թեմական Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան: Աղընթերականերն էին Մայր Տաճարի լուսարարապետ Հոգշ. Տ. Մամիկոն Վրդ. Քիլէճեան եւ Գրիգոր եւ Գլարա Ջոհրապ Տեղեկատուութեան Կեդրոնի վարիչ Հոգշ. Տ. Դանիէլ Վրդ. Ֆընտրքեան: Եկեղեցական արարողութեանց կը հանդիսապետէր Երուսաղէմի Առաքելական Աթոռի Պատրիարք Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեան: Ներկայ էին Գերշ. Տ. Եղիշէ Արք. Կիզիրեան, Թեմական Պատուիրակ եւ Միջ-Եկեղեցական Յարաբերութեանց Վարիչ Գերշ. Տ. Վիգէն Արք. Այգազեան, Անգլիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Վահան Եպս. Յովհաննէսեան, շրջանի հոգեւոր հովիւներ, ՄԱԿ-ի մօտ Հայաստանի Հանրապետութեան մնայուն եւ լիազօր Դեսպան Տիար Կարէն Նազարեան եւ իր ազնիւ Տիկինը, Թեմական Խորհուրդի անդամներ, ազգային բարերարներ, միութեանց ներկայացուցիչներ եւ աւելի քան 400 հաւատացեալներ:

Մայր Տաճարին մէջ կը տիրէր խորհրդաւոր եւ յուզումնախառն բացառիկ մթնոլորտ մը: Շատերու համար, որոնք ճանչցած կամ գործակցած էին Թորգոմ Սրբազան Հօր հետ այն զգացումը ունեցան որ Սրբազան Հօր հոգին ներկայ էր եւ կը սաւառնէր իր իսկ շրջանին կառուցուած այս գեղակերտ Տաճարի մէջ: Այդ զգացումը աւելի խորացաւ երբ դպրաց դասի անդամներն ու մենակատարները, ղեկավարութեամբ խմբավար Խորէն Մէյխանէճեանի, գերազանցեցին իրենք զիրենք եւ ներկաներուն հոգիները վերացուցին բացառիկ եւ ազդեցիկ երգեցողութեամբ: Նոյնպիսի ազդեցութիւն գործեցին նաեւ Ս. Խորանին ծառայող սարկաւագները:

Նոյն զգացումով տոգորուած պատարագիչ Առաջնորդ Սրբազան Հայրը իր քա-

րոզը սկսաւ հետեւեալ խօսքերով. «Այսօր յիշատակութեան օրն է Հայ հոգեւորականի մը, հոգելոյս Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի, որ իր ամբողջ կեանքը նուիրեց այն կարեւոր սրբազան գործին, որուն շնորհիւ Քրիստոսի առաքելութիւնը, Հայ Եկեղեցւոյ աւանդութեանց ճանապարհով, շարունակեց եւ կը շարունակէ ներգործել Հայ ժողովուրդի կեանքէն ներս, մասնաւորաբար Ամերիկայի մեր Թեմէն ներս: ... Քսաներորդ դարու երկրորդ կէսի Հայ Եկեղեցւոյ բարձրաստիճան հոգեւորականներու շարքի ամենէն կարկառուն եւ լուսաւոր դէմքերէն մէկն էր Թորգոմ Սրբազանը»: Ապա, Առաջնորդ Սրբազան Հայրը հանգամանօրէն թուեց հոգելոյս Թորգոմ Պատրիարքի արդիւնաշատ ծառայութիւնները ի նպաստ Ամերիկայի Թեմին, Հայաստանին եւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին: Անդրադարձաւ նաեւ Պատրիարք Սրբազան Հօր կենսագրութեան՝ շեշտելով որ անոր մկրտութեան անունը Աւետիս էր, եւ երբ ան պատասխանելով մեր Տիրոջ կոչին եկեղեցական ասպարէզը ընդգրկեց՝ Հայ Եկեղեցւոյ համար եղաւ մեծագոյն աւետիսը: Եօթանասուն տարիներու հոգեւոր սպասաւորութեամբ ան «ինչ որ ունէր» ամբողջութեամբ նուիրեց իր եկեղեցիին եւ ազգին: Ապա, Սրբազան Հայրը խօսեցաւ Հայ Ժողովուրդի հրաշք պատմութեան մասին՝ ըսելով որ մեր այսօրուան գոյութիւնը իբրեւ ազգ մեծագոյն հրաշքներէն մէկն է: Ինչպէս նաեւ անդրադարձաւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի պատմութեան եւ կարիքներուն մասին:

Յաւարտ Ս. Պատարագի՝ Հոգելոյս Թորգոմ Պատրիարք Մանուկեանի հոգիի խաղաղութեան համար մասնաւոր Հոգեհանգստեան Պաշտօն կատարուեցաւ հանդիսապետութեամբ Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեանի:

* * *

Հոգելոյս Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի յիշատակը յարգող մօտ 300 անձեր ներկայ գտնուեցան Առաջնորդարանի Հայկ եւ Ալիս Գաւուքճեան հանդիսասրահին մէջ կազմակերպուած կէսօրուան ոգեկոչման հանդիսութեան:

Օրուան հանդիսավարն էր Դոկտ. Դաւիթ Նաճարեան, որ հրաւիրեց Գերշ. Տ. Վիգէն Արք. Այգազեանը՝ որպէս զի կատարէ սեղանի օրհնութիւնը: Ապա, հանդիսավարը կատարեց բացման իր երախտագէտ խօսքը եւ հրաւիրեց երկու ծանօթ արուեստագէտներ Սոլանճ Մըրտիրեան (սօփրանօ) եւ Սոֆիա Մելիքեան(դաշնամուր) որպէս զի երգեր ունենան: Անոնք մեծ յաջողութեամբ ներկայացուցին Կոմիտաս Վարդապետի եւ Պէրպէրեանի ստեղծագործութիւնները՝ արժանանալով ծափահարութեանց:

Ապա, հանդիսավարը հրաւիրեց Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեանը՝ իր սրտի խօսքը ըսելու: Սրբազան Հայրը նախ եւ առաջ շնորհակալութիւն յայտնեց Մայր Տաճարի Լուսարարապետ Հոգշ. Տ. Մամիկոն Վրդ. Քիլէճեանին, օրուան կարգադիր յանձնախումբի ատենապետ Դոկտ. Դաւիթ Նաճարեանին եւ բոլոր անդամներուն, որոնց անխոնջ ջանքերուն շնորհիւ կարելի եղաւ այսպիսի պատուաբեր ոգեկոչման հանդիսութիւն մը կազմակերպել: Սրբազան Հայրը դարձեալ անդրադարձաւ իր մենթորը հանդիսացող հոգելոյս Թորգոմ Պատրիարքի հոգեւոր եւ ազգային արդիւնաւոր գործունէութեանց մասին՝ իր խօսքը համեմելով Պատրիարք Սրբազան Հօր հետ ունեցած զուարճալի դէպքերով:

Յայտնի դերասանուհի Նորա Արմանի հաղորդական ոճով կարդաց Շէն Մահի (Թորգոմ Արք. Մանուկեան) բանաստեղծութիւններէն հատուածներ Հայերէն եւ Անգլերէն թարգմանութեամբ:

Հանդիսավարը հրաւիրեց Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեանը՝ որպէս զի իր պատգամը տայ: Պատրիարք Հայրը անդրադարձաւ հոգելոյս Թորգոմ Արք. Մանուկեանի կատարած նախաձեռնութիւններուն եւ միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական յարաբերութեանց մասին՝ ի նպաստ Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին: Խօսեցաւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի այսօրուան կացութեան ինչպէս նաեւ դիմագրաւելիք մարտահրաւէրներուն մասին:

Բոլոր ներկաներուն աթոռներուն վրայ դրուած էին Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի «Սիոն» ամսագիրի գունաւոր եւ գեղատիպ բացառիկ թիւը՝ ամբողջութեամբ նուիրուած հոգելոյս Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանին:

Նախ քան փակման աղօթքը՝ ներկաներուն ցուցադրուեցաւ ձայնաժապաւէն մը նուիրուած Թորգոմ Պատրիարքի կեանքին: Ցուցադրութեան կ'ընկերակցէր Առաջնորդարանի Յարաբերութեանց Բաժանմունքի համակարգող Քրիս Զաքեանի մեկնաբանութիւնն ու բացատրութիւնը: Այս շատ յաջող ձայնաժապաւէնը պատրաստուած էր Բաժանմունքի անձնակազմին՝ Քրիս Զաքեանի, Արթը Պետրոսեանի եւ Կարինէ Ապալեանի կողմէ:

Բոլոր ներկաներուն կողմէ երգուած Տէրունական Աղօթքը առաջնորդեց Գերշ. Տ. Եղիշէ Արք. Կիզիրեան եւ արտասանեց արձակման մաղթանքը:

ԴԻՒԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄՈՍԿՎԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ Ս. ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Փետրվարի 9-ին,Մոսկվայի Ս. Պայծառակերպություն առաջնորդանիստ Մայր տաճարում, հրնթացս Ս. Պատարագի տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն եւ օծում՝ ձեռամբ Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի:

Օրհնությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Եզրաս սրբազանը քահանայության կոչեց Միեր սարկավագ Բեկնազարյանին եւ Դանիել սարկավագ Խանանյանին: Նախորդ օրը՝ երեկոյան ժամերգությունից առաջ, ժողովրդի առաջ կատարվեց քահանայության պատրաստվողների ընծայման կարգը, որի ընթացքում սարկավագները վկայեցին իրենց հավատքի ուղղափառությունը եւ հավատարմության ուխտ կատարեցին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն:

Ս. Պատարագի ընթացքում Սրբազան Հայրը ս. մյուռոնով օծեց նրանց ճակատներն ու ձեռքերը՝ շնորհելով հոգեւոր նոր անուններ. Միեր սարկավագ Բեկնազար-

յանը վերակոչվեց Տ. Գրիգոր քահանա, Դանիել սարկավագ Խանանյանը՝ Տ. Ներսես քահանա: Այնուհետեւ ձեռնադրող Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ խրատներ ուղղելով նորաօծ հոգեւորականներին: Իր խոսքում Եզրաս Սրբազանն ասաց. «Մեզ համար մխիթարություն է եւ ուրախություն, որ առաջին անգամ շնորհ ունեցանք նորբաց Մայր տաճարում ձեռնադրելու խոնարհ, ծառայասեր ու եկեղեցասեր ոգով տարիներ շարունակ եկեղեցում սպասավորող երկու արժավոր մշակների: Մաղթենք եւ հայցենք, որ Տերը օգնական լինի, զորություն, ուժ եւ կարողություն պարգեւի, որպեսզի մեր Եկեղեցու անդաստանի մեջ, որպես խոնարհ մշակներ, արդյունաշատ ծառայությամբ ճշմարիտ քրիստոնյայի ու քաջ հոգեւորականի օրինակ լինեն»:

Սրբազան հայրը հույս հայտնեց, որ Գրիգոր եւ Ներսես սուրբ հայրապետների անուններով վերակոչված քահանաներն իրենց ծառայության ընթացքում կառաջնորդվեն մեծանուն սրբերի ոգով, կլծվեն ժողովրդի հոգեւոր կյանքը շենացնելու, մարդկանց դեպի Աստված հրավիրելու եւ Ավետարանի լույսն ամենուրեք տարածելու առաքելությանը:

Սրբազան արարողությունից հետո ներկաները մոտեցան շնորհավորելու եւ համբուրելու նորաօծ քահանաների մյուռոնաբույր ճակատներն ու ձեռքերը:

Քառասնօրյա աղոթական շրջանից հետո նորընծա հոգեւորականները կշարունակեն իրենց ծառայությունը Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմում:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ
ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

ՏՅԱՌՆԸԴԱՌԱՋԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Տյառնընդառաջի տոնի սկիզբն ազդարարվեց փետրվարի 13-ի երեկոյան: Միաձուլաջ Մայր Տաճարում Երեկոյան ժամերգության ավարտին, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց նախատոնակի արարողություն եւ անդապանի կարգ:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Տաճարի Իջման Ս. Սեղանի կանթեղից վառած մոմով Քրիստոսին խորհրդանշող լույսը փոխանցեց հավատացյալներին:

Այնուհետեւ Մայր Աթոռի շրջափակում ներկայությամբ հարյուրավոր ուխտավորների վառվեց Տյառնընդառաջի ավանդական խարույկը, իսկ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաները հանդես եկան շարականների եւ ազգային երգերի կատարումներով:

Փետրվարի 14-ին՝ տոնի առիթով, Մայր Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ծիսահա-

յեցակարգային գրասենյակի պատասխանատու Տ. Զաքարիա վարդապետ Բաղումյանը: Պատարագի ընթացքում հոգեշնորհ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով տոնի կարեւորությանը քրիստոնյայի կյանքում. «Այս տոնը հրավեր է մեզանից յուրաքանչյուրին՝ Տիրոջն ընդառաջ գնալու, մեր հավատքի մեջ զորանալու, անսահման հույսի եւ սիրո մեջ ապրելու, քանզի հաղթանակած Աստված մեզ հետ է: Այն նաեւ պատեհ առիթ է մեզ համար՝ մտորելու, թե որքա՞ն մոտ ենք Աստծուն, որքա՞ն տեղ ունի Աստված մեր կյանքից ներս: Տյառնընդառաջի խորհուրդը նաեւ Աստծուն սպասելու, նրան մերձենալու եւ նրա ներկայությունը զգալու մեջ է»: Իր խոսքում Հայր Սուրբը հավատացյալ հայորդիներին հորդորեց առանց դույզն-ինչ դադարելու ընդառաջ գնալ Տիրոջ կենսատու եւ անմար լույսին եւ ամեն ժամ աղոթելու, որպեսզի Աստված բոլորին արժանացնի այն անհուն խնդությանն ու բերկրանքին, որ ապրեց Սիմեոն ծերունին Հիսուս մանկանը գրկելու ժամանակ:

Պատարագի ավարտին, հանդիսապետությամբ Մայր Աթոռի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի, կատարվեց նորապսակների օրհնության արարողություն:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԴԵՄ Է ՓԵՐԻՆՉԵՔՆ ԸՆԴԴԵՄ ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՅՑՈՎ ՄԻԵԴ-ՎՃՌԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր մտահոգությունն է արտահայտել 2013 թ. դեկտեմբերի 17-ին Մարդու իրավունքների եւրոպական դատարանի (ՄԻԵԴ)՝ Դողու Փերինչեքի գործով ընդդեմ Շվեյցարիայի կայացրած անընդունելի վճռի առիթով:

Այս առնչությամբ Նորին Սրբությունը նամակ է հղել Շվեյցարիայի Համադաշնության նախագահ Դիդիեր Բուրխալտերին՝ հանուն Հայ Եկեղեցու եւ աշխարհասփյուռ հայ ժողովրդի ընդվզում հայտնելով ՄԻԵԴ-ի վնասակար որոշման դեմ, որը սպառնալիք է ցեղասպանությունների պարագային արդարության վերականգնման եւ ազգերի միջեւ խաղաղության ու փոխադարձ հարգանքի հաստատման համար: Զորակցություն հայտնելով այս հարցում համընդհանուր ընդվզմանը՝ Վեհափառ Հայրապետը Շվեյցարիայի կառավարությանը՝ մասնավորապես Արդարադատության նախարարությանը, հորդորել է բողոքարկել այս որոշումը: Ամենայն Հայոց Հայրապետը կոչ է արել բարի կամքի տեր մարդկանց եւ պետություններին՝ այս առնչությամբ իրենց կեցվածքն արտահայտելու Ցեղասպանության մերժողականության դեմ՝ հանուն խտրականության ու անհանդուրժողականության վերացման եւ ընդդեմ մարդկության հանցագործությունների կանխման:

Այս կապակցությամբ Նորին Սրբությունը պաշտոնական գրություն է հղել Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար Վեր. դոկտ. Օլավ Թվայթին՝

հորդորելով Խորհրդի անդամ եկեղեցիներին իրենց ձայնը բարձրացնել ընդդեմ աղետարեր այս վճռի՝ ի պաշտպանություն Շվեյցարիայի, ինչպես նաեւ Կաթոլիկ Եկեղեցու Շվեյցարիայի եպիսկոպոսների ժողովի նախագահ Մոնսինյոր Մարկուս Բյուխելին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՀԱՎԱՔ

Փետրվարի 25-ին՝ Ս. Ղեւոնդյանց քահանայից տոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ քահանայից ավանդական հավաքը: Քահանայից ժողովին մասնակցում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան եպիսկոպոսները, Հայաստանյան թեմերի առաջնորդները, Մայր Աթոռի եւ թեմերի երկու հարյուր քսան հոգեւոր սպասավորներ:

Առավոտյան Մայր Տաճարում եկեղեցականները, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մասնակցեցին Ս. Պատարագի արարողության: Պատարագիչն էր Սեւանի փարածաշրջանի Ծաղկունքի Ս. Սարգիս եւ Ցամաքաբերդի Ս.Գեւորգ եկեղեցիների հոգեւոր հովիվ Տ. Նշան քահանա Սարգսյանը: Պատարագի ընթացքում արժանապատիվ Տեր Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով տոնի խորհրդի կարեւորությանը հայ ժողովրդի կյանքում. «Ղեւոնդյանք իրենց նահատակությամբ ապացուցեցին, որ կարելի է նմանվել Քրիստոսին՝ կատարելով Տիրոջ՝ Երկնավոր Հոր նման կատարյալ լինելու պատվերը: Ղեւոնդյանք իրենց նահատակությամբ ստիպեցին մեզ սիրել մեր երկիրը, Քրիստոսի արյամբ գնված առաքելահաստատ մեր Մայր Եկեղեցին եւ տանջված ու հաղթանակած մեր ժողովրդին: Ղեւոնդյանների խորհուրդը հարատեւ է: Պատմության քառուղիներում այն միշտ ուղեկցել է մեզ եւ այսօր էլ երաշխավորն է մեր հաղթանակների ինչպես անցյալ դարավերջին պատմական Արցախում, այնպես էլ այս նոր ժամանակներում»:

Պատարագից հետո Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում իր աշխատանքները սկսեց քահանայից ավանդական հավաքը, որի քննարկման թեմաներն էին՝ «Կիրակնօրյա դպրոցների կարեւորությունը համայնքային կյանքում» եւ «Երեցկնոջ դերը հովվական ծառայության մեջ»:

Ժողովը բացվեց քահանայից հավաքի կազմակերպիչ Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի խոսքով: Այնուհետեւ քահանա հայրերին իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը, տոնի առիթով իր շնորհավորանքներն ու բարեմաղթանքները բերելով ժողովին մասնակից հոգեւոր սպասավորներին, մասնավորապես նշեց. «Փառք ենք տալիս Աստծուն, որ սովորույթի համաձայն ամեն տարի թեմական առաջնորդների գլխավորությամբ այստեղ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, աղոթքի, սիրո եւ եղբայրական մթնոլորտում անդրադարձ է կատար-

վում եկեղեցական կյանքում առկա խնդիրներին, որոնց լուծումները կարեւոր եւ անհրաժեշտ են հոգեւոր ծառայությունն ավելի արդյունավոր դարձնելու համար: Մենք ունենք Եկեղեցու առջեւ ծառացած բազում խնդիրներ ու դժվարություններ, որոնց մասին այսօր բարձրաձայնելու առիթ եւ հնարավորություն է ստեղծվում հոգեւոր սպասավորներիս համար»: Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատականը հայտնեց թեմական առաջնորդներին եւ հոգեւոր դասի ներկայացուցիչներին, ովքեր նվիրումով ու հանձնառությամբ են կատարում իրենց առաքելությունն ազգային կյանքից ներս: Վեհափառ Հայրապետն աղոթք բարձրացրեց առ Աստված ժողովի արդյունավոր ընթացքի համար՝ եկեղեցականներին մաղթելով արեւշատություն եւ բարեհաջող ծառայություն:

Հավաքի ընթացքում զեկույցներով հանդես եկան Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Վարդան վարդապետ Նավասարդյանը եւ Արագածոտնի թեմից Տ. Գարեգին քահանա Արսենյանը:

Քննարկումների արդյունքում կարեւորվեց կիրակնօրյա դպրոցների դերն ու նշանակությունը համայնքային կյանքում: Թեմերի հոգեւոր սպասավորներն իրենց մտահոգություններն արտահայտեցին կիրակնօրյա դպրոցների գործունեությանն առնչվող խնդիրների կապակցությամբ: Ապա ժողովականների կողմից անհրաժեշտ նկատվեց բոլոր համայնքներում կիրակնօրյա դպրոցների ստեղծումը, քանի որ դրանք նպաստում են մանուկների շրջանում հոգեւոր գիտելիքների զարգացմանն ու բարոյական կերպարի կերտմանը:

Անդրադառնալով հոգեւոր սպասավորության արդյունավոր կազմակերպման գործում երեցկնոջ դերակատարության կարեւորությանը՝ արձանագրվեց համայնքային կյանքում երեցկնոջ ներգրավվածության անհրաժեշտությունը: Իբրեւ հաջողված օրինակ ներկայացվեց Արագածոտնի թեմում իրականացված «Լույս մանկանց» կիրակնօրյա դպրոցների ծրագիրը, որին թեմի երեցկանայք գործուն մասնակցություն են բերել ի նպաստ երեխաների հոգեւոր դաստիարակության: Ժողովի ընթացքում որոշվեց երեցկանանց համար ամենամյա հավաքներ կազմակերպել ապրիլի 7-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, որոնք առավել կնպաստեն համայնքներում հովվական կյանքի մեջ նրանց օգտակար ներգրավվածությանը:

Ժողովի ավարտին տեղի ունեցավ ամենամյա ավանդական պարգեւաբաշխությունը: Տոնի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Ս. Ներսես Շնորհալի» շքանշան հանձնեց Տ. Կարապետ ավագ քահանա Գալըճյանին՝ քահանայության 50-ամյակի եւ Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում 20-ամյա հոգեւոր ծառայության համար: Ծաղկյա փիլոն կրելու իրավունք շնորհվեց Արարատյան Հայրապետական թեմից Տ. Դանիել քահանա Բաղումյանին, Տ. Զաքարիա քահանա Ավետիսյանին, Տ. Վարդան քահանա Գավոյանին, Տ. Եսայի քահանա Արթենյանին, Տ. Անուշավան քահանա Կոշեցյանին, Արմավիրի թեմից Տ. Մկրտիչ քահանա Մուշաղյանին, Արցախի թեմից Տ. Բարսեղ քահանա Անդրյանին, Գուգարաց թեմից Տ. Վահան քահանա Ազարյանին եւ Տ. Ստեփանոս քահանա Մարգարյանին, Վիրահայոց թեմից Տ. Հուսիկ քահանա Հարությունյանին, Տ. Նարեկ քահանա Ղուշչյանին եւ Տ. Սամվել քահանա Թորոսյանին:

Լանջախաչ կրելու իրավունքի արժանացան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Տ. Գաբրիել քահանա Վարդանյանը եւ Տ. Ղեւոնդ քահանա Տյոմկինը, ՀՀ Զինված ուժերի հոգեւոր սպասավորությունից Տ. Ենովք քահանա Եսայանը եւ Տ. Սամուել քահանա Սարգսյանը, Գեղարքունյաց թեմից Տ. Տիրատուր քահանա Հակոբյանը, Սյունյաց թեմից Տ. Ռաֆայել քահանա Խաչիկյանը, Շիրակի թեմից Տ. Հարություն քահանա Պետրոսյանը, Գերմանիայի հայոց թեմից Տ. Գնել քահանա Գաբրիելյանը, Տ. Այգիկ քահանա Հովհաննիսյանը եւ Տ. Հրաչ քահանա Պիլիճին, Ռումինիայի հայոց թեմից Տ. Հեթում քահանա Թարվերդյանը, Բուլղարիայի հայոց թեմից Տ. Հրաչ քահանա Մուրադյանը:

Շնորհաբաշխության ավարտին հոգեւորականներին վերստին հայրապետական իր պատգամը բերեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Այսօր առկա են բոլոր հնարավորությունները, որ մենք կարողանանք մեր ժողովրդին քրիստոնեական ճշմարիտ արժեքներով ապրեցնել, այդ արժեհամակարգի մեջ կրթել ու դաստիարակել: Ուստի անհրաժեշտ է նվիրում, հանձնառության ոգի եւ զոհաբերության գիտակցություն. բառեր, որոնք ամբողջապես պատկերում են մեր առաքելությունը եւ մշտական ուղեկիցները պետք է լինեն հոգեւոր սպասավորի: Մենք վստահ ենք, որ միասնական աշխատանքի միջոցով պիտի կարողանանք մեր ժողովրդին պահել մեր հայրերի սուրբ հավատքի, ազգային ավանդույթների, եկեղեցական կարգերի ու կանոնների մեջ»,- ընդգծեց Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքում: Վեհափառ Հայրապետը գնահատանքով անդրադարձավ, որ այսօր եկեղեցականները հաճախ դժվարին ու ծանր պայմաններում անտրտունջ կերպով նվիրյալ ծառայություն են բերում ժողովրդին՝ իրենց վրա վերցնելով մեծ հանձնառություններ ու զրկանքներ: Իր օրհնությունը բերելով Հայ Եկեղեցու հոգեւոր ողջ դասին՝ Նորին Սրբությունը հորդորեց տոնի խորհրդով զորացած շարունակել իրենց տերունապատվեր առաքելությունը եւ աներկյուղ ու նախանձախնդիր կերպով կրել ամեն տեսակի հանձնառություն՝ ի սեր հավատավոր ժողովրդի, Եկեղեցու եւ Հայրենիքի:

Ժողովի ամփոփումից հետո Մայր Տաճարում եկեղեցականները մասնակցեցին Երեկոյան ժամերգության:

ԵԿՄ ՆՈՐԸՆՏԻՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Փետրվարի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Երկրապահ կամավորականների միության նորընտիր վարչության անդամներին՝ ղեկավարությամբ միության նախագահ, ԱԺ պատգամավոր գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանի:

Հանդիպման սկզբում ԵԿՄ նախագահը, շնորհակալություն հայտնելով ընդունե-

լության համար, համառոտ կերպով Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց ԵԿՄ անցած ուղին ու նպատակները: Մասնավորապես անդրադառնալով հայրենասիրական ոգու բարձրացմանը եւ ազատամարտիկների ու նրանց ընտանիքների ընկերային խնդիրների լուծմանն ուղղված ԵԿՄ ծրագրերին՝ տիար Մանվել Գրիգորյանը հայցեց Վեհափառ Հայրապետի օրհնությունը կառույցի տասներորդ հոբելյանական տարվա կապակցությամբ:

Ողջունելով ԵԿՄ անդամներին՝ Վեհափառ Հայրապետն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց նրանց՝ նախախնամական նկատելով Ս. Վարդանանց նահատակներին եւ Ս. Ղեւոնդյանց քահանաներին նվիրված տոների շրջանում նրանց այցը Մայր Աթոռ: «*Վարդանանց ոգին մեր պատմության բոլոր ճակատագրական պահերին իր պայծառ դրսեւորումն է ունեցել մեր հայորդիների մեջ, երբ լծվել են Հայրենիքի պաշտպանության սրբազան գործին: Մենք առանձնացնում ենք Ավարայրի ճակատամարտը՝ այն համարժեքության բերելով Սարդարապատի եւ Արցախյան հերոսամարտի հետ, որի կերտողները երկրապահ կամավորականներն են, ովքեր, Հայրենիքի կանչն արձանագրելով իրենց հոգում, ինքնաբուխ մեկնեցին պաշտպանելու եւ ազատագրելու Արցախ աշխարհը*»: Նորին Սրբությունն ընդգծեց, որ հայ ժողովուրդը երախտագիտությամբ է հիշում իր յուրաքանչյուր զինվորին, խոնարհում է բերում կամավորականներին եւ աղոթում բոլոր նրանց համար, ովքեր իրենց կյանքն ընծայաբերեցին հայոց պետականության անսասանության եւ հայ ժողովրդի խաղաղ ու անվրդով ապագայի համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաեւ այսօր Հայրենիքի առջեւ ծառացած մարտահրավերներին ու խնդիրներին՝ նշելով, որ դժվարությունների հաղթահարման միակ ճանապարհն այն ոգին է, որ դրսեւորվեց Արցախյան հերոսամարտում:

Նորին Սրբությունը հորդորեց ԵԿՄ անդամներին շարունակել միության գործունեությամբ վառ պահել հայրենասիրության ու հայրենանվիրումի ոգին եւ փոխանցել այն երիտասարդ սերունդներին, որպեսզի միշտ անպարտ մնա Հայաստան աշխարհը:

Հանդիպման ընթացքում որոշվեց Երկրապահի օրն առանձնահատուկ կերպով նշել Մայր Աթոռում՝ առիթ ընձեռելով երկրապահ կամավորականներին այցելելու Ս. Էջմիածին եւ նորոգելու Հայրենիքին կամավորաբար ծառայելու իրենց սրբազան ուխտը:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Փետրվարի 27-ին՝ Սրբոց Վարդանանց տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ, որի ընթացքում նաեւ կատարվեց քահանայական ձեռնադրություն: Պատարագիչն էր Մայր Աթոռի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը, որի ձեռամբ քա-

հանայական ձեռնադրություն եւ օծում ստացան Գեւորգյան հոգեւոր ճեմարանի չորս եւ Քահանայից լսարանի վեց շրջանավարտ սարկավագներ:

Ս. Պատարագի ընթացքում Մուշեղ Սրբազանը քահանայության կոչեց նորընծաներին՝ Սրբալույս Մյուռոնով օծելով նրանց ճակատներն ու ձեռքերը, եւ շնորհեց նրանց հոգեւոր նոր անուններ: Առնակ սրկ. Տերտերյանը վերակոչվեց Տ. Տաթեւ քահանա, Հովհաննես սրկ. Միրզոյանը՝ Տ. Արսեն քահանա, Անդրանիկ սրկ. Հովհաննիսյանը՝ Տ. Ոսկան քահանա, Ռոման սրկ. Պետրոսյանը՝ Տ. Փառեն քահանա, Ռոբերտ սրկ. Ասատրյանը՝ Տ. Ատոմ քահանա, Վահրամ սրկ. Քարտաշյանը՝ Տ. Աբել քահանա, Դավիթ սրկ. Մարգարյանը՝ Տ. Արգար քահանա, Կարեն սրկ. Հեբոյանը՝ Տ. Վահան քահանա, Հրայր սրկ. Գրիգորյանը՝ Տ. Համազասպ քահանա, Ջավեն սրկ. Հարությունյանը՝ Տ. Հովակիմ քահանա: Ձեռնադրության արարողության ավարտին քահանաներն իրենց անդրանիկ օրհնությունը տվեցին ներկաներին:

Այնուհետեւ ձեռնադրող Սրբազան Հայրը, իր ուրախությունը հայտնելով Ս. Վարդանանց տոնին կատարած ձեռնադրության առիթով եւ շնորհավորելով նորընծա քահանա հայրերին, իր քարոզում անդրադարձավ քահանայության կարեւորությանը: «Մեր Տիրոջ մի խոսքով ձկնորսները վերափոխվեցին առաքյալների եւ առանց երկմտելու գնացին Նրա կանչին ընդառաջ՝ թողնելով ամեն ինչ՝ թե՛ անուն, թե՛ ընտանիք եւ թե՛ ապրուստ: Նրանք նոր ծնունդ, նոր անուն եւ նոր կյանք ստացան: Աղոթքով լեցուն այս կամարները, սիրելիներ, վկաներն են բազմաթիվ նման հոգեւոր ծնունդների, ականատեսն են Սուրբ Հոգու շնորհների բաշխման, որոնք երկնքից առատապես հեղվել են Միածնի Իջման Սուրբ Սեղանին ծնկի եկած կոչյալների վրա՝ Սուրբ Հոգու աներեւույթ հպումով օծելով նրանց՝ որպես Աստծո սպասավորներ:

...Շնորհընկալ եւ հոգեկիր երեցներ եղաք այսօր ձեռնադրության եւ ձեռքի հպումով, իսկ Սրբալույս Մյուռոնի օծմամբ դարձաք երկու հազարամյակ ձգվող սրբազան խորհրդի մասնակիցներ: Սուրբ խորանին կանգնած այս նորաօծ հոգեւորականներից յուրաքանչյուրն իր սիրտը բացեց, ընդառաջ գնաց այն կանչին, որը դժվարագույններից է մարդկային կյանքում: Նրանք համաձայնեցին լինել մարդկանց որսորդներ, հանձն առան եւ ուխտեցին Զեբեդեոսի որդիների նման ամեն ինչ սիրով կատարել, սուրբ հայրապետների կանոններով առաջնորդվել եւ նրանցից երբեք չխոտորվել կամ նահանջել», - ասաց Սրբազան Հայրը՝ հորդորելով նորընծաներին իրենց ծառայությունը բերել հայ ժողովրդին եւ Եկեղեցուն անսասան հավատով, անսակարկ նվիրումով ու անկոտրում կամքով:

Իր քարոզում Մուշեղ Սրբազանն անդրադարձավ նաեւ Ս. Վարդանանց նահատակների տոնի խորհրդին: «Մի ամբողջ ազգ Ավարայրում փորձվեց եւ փրկվեց մի աներեւույթ ձեռքի միջոցով. Ամենազոր Տերն էր, Ով, տեսնելով հայ ազգի հավատքը, հայրենի հողին նահատակվելու ոգին, Իրեն ուղղված հուսառատ աղոթքը, անսաց մեր փոքր ածուի սրտաբուխ աղոթքին, եւ Տղմուտի ջրերը մեր հավատքի մկրտության, իսկ Ավարայրը՝ ալ արյան մկրտության փրկարար նավակի վերածեց: Ավարայրը չի կարող հայի համար հուշ լինել, չի կարող լոկ պատմություն մնալ, այն հայ տեսակի, Աստծուն

որդեգրվելու պանծալի ուղու պսակումն է: Մի ամբողջ ժողովրդի լավագույն զավակները՝ ռամիկ, շինական, իշխան, զորական, ուսուցիչ եւ վարդապետ, ոտքի կանգնած գնում էին նահատակվելու այն հայրենիքի եւ այն Տիրոջ համար, որտեղից նոր կյանք սկսվեց: ...Վարդանանք մեր ժողովրդի պատմության եւ հիշողության մեջ դաջված են իբրեւ հայրենասիրության, հավատասիրության եւ արիության խորհրդանիշներ, եւ այս բոլորն անառարկելի է, սուրբ Վարդանանք այն հերոսներն են, ովքեր լսեցին Աստուծո կանչը, ովքեր իրենց մաշկի գույն եւ զրահ դարձրին Քրիստոսի հավատքը», - ընդգծեց պատարագիչ Սրբազանը:

Քարոզի ավարտին Մուշեղ Սրբազանը Հայ Եկեղեցու ուխտապահ հոգեւոր դասի եւ հավատավոր ժողովրդի անունից շնորհավորեց Ամենայն Հայոց Հայրապետին անվանակոչության օրվա առիթով՝ մաղթելով Ս. Վարդանանց բարեխոսությամբ երկար տարիների անսասան գահակալություն:

Այնուհետեւ Մայր Աթոռի միաբաններն առաջնորդությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձրացան Ս. Խորան՝ շնորհավորելու քահանաներին եւ համբուրելով նրանց մյուռոնաբույր ճակատներն ու ձեռքերը՝ ստանալու առաջին «Ողջույն»-ը:

Նորընծա քահանա հայրերը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կանցկացնեն քառասնօրյա պատրաստության եւ աղոթքի շրջան, որից հետո ծառայության կկոչվեն Հայ Եկեղեցու տարբեր կառույցներում եւ թեմերում:

Սուրբ Պատարագի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվանակոչության տոնի առիթով Իջման Ս. Սեղանի առջեւ, նախագահությամբ Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալփաքյանի, կատարվեց Հայրապետական մաղթանք: Եկեղեցականաց դասն ու ժողովուրդը միասնական աղոթք առաքեցին առ Աստված՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսության անսասանության ու պայծառության եւ Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի կենաց արեւշատության եւ արգասավոր հովվապետության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տ. ՏԱԹԵՒ ՔԱՀԱՆԱ ՏԵՐՏԵՐՅԱՆ

(ավազանի անունը՝ Առնակ)

Ծնվել է 1985 թ. դեկտեմբերի 9-ին Էջմիածին քաղաքում:

1993-2003 թթ. սովորել է Էջմիածնի Խ. Աբովյանի անվան թիվ 4-րդ միջնակարգ դպրոցում:

1995-2002 թթ. սովորել է Էջմիածնի թիվ 2 երաժշտական դպրոցում:

1996-2001 թթ. սովորել է Ս. Մարիամ Աստվածածին կիրակնօրյա վարժարանում:

1996-2003 թթ. ծառայել է Ս. Շողակաթ վանքում:

2003-2007 թթ. սովորել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում:

2007-2009 թթ. սովորել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանում:

2007 թ. դեկտեմբերի 25-ին ձեռամբ Գերաշնորհ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթազճյանի ձեռնադրվել է սարկավագ:

2009-2010 թթ. ծառայել է Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակում՝ որպես գործավար-քարտուղար:

2010 թ. պաշտպանել է ավարտաճառ «Հայերեն կրոնաեկեղեցական բառերի բազմիմաստությունը» թեմայով:

2010-2011 թթ. ծառայել է Վայք քաղաքի զորամասում՝ որպես հոգեւոր սպասավոր:

2011 թ. մարտ ամսից ծառայում է ՀՀ Պաշտպանության նախարարությունում՝ որպես ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդի գործավար-քարտուղար:

2012 հուլիս - 2013 դեկտեմբեր ժամանակահատվածում սովորել է ՀՀ ՊՆ կադրերի եւ ռազմական կրթության վարչության միջազգային ծրագրերով կադրերի պատրաստման եւ օտար լեզուների ուսուցման բաժամունքի անգլերեն լեզվի խմբում:

Պարգեւատրվել է ՀՀ Պաշտպանության նախարարի «Անդրանիկ Օզանյան», «Դրաստամատ Կանայան», «ՀՀ Զինված ուժեր. 20 տարի» մեդալներով:

2014 թ. փետրվարի 27-ին ձեռամբ Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ԱՐՍԵՆ ՔԱՀԱՆԱ ՄԻՐԶՈՅԱՆ

(ավազանի անունը՝ Հովհաննես)

Ծնվել է 1987 թ. հոկտեմբերի 20-ին Արմավիրի մարզի Արեւաշատ գյուղում:

1994-1997 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1998-2004 թթ. սովորել է Էջմիածնի Ներսիսյան վարժարանում:

2004-2009 թթ. սովորել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում:

2009-2011 թթ. սովորել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանում:

2009 թ. դեկտեմբեր 26-ին ձեռամբ Գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանի ձեռնադրվել է սարկավագ:

2011 թվականի հուլիս-հոկտեմբեր ամիսների ծառայության է անցել Վեհարանում՝ որպես գավազանակրի օգնական:

2011 թ. նոյեմբերից ծառայում է Դիվանատան Ներեկեղեցական հարաբերությունների գրասենյակում՝ որպես գործավար-քարտուղար:

2011 թ. հունիսին պաշտպանել է ավարտաճառ «Առաքինության ըմբռնումը անտիկ հունական փիլիսոփայության եւ Ե. դարի հայ աստվածաբանական մտքի մեջ (պատմա-համեմատական վերլուծություն)» թեմայով:

2014 թ. փետրվարի 27-ին ձեռամբ Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ՓԱՌԵՆ ՔԱՀԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

(ավագանի անունը՝ Ռոման)

Ծնվել է 1984 թ. դեկտեմբերի 24-ին Շիրակի մարզի Աշոցք գյուղում:

1991-2001 թթ. սովորել է Աշոցքի թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1996-2001 թթ. սովորել է Աշոցքի Կոմիտասի անվան երաժշտական դպրոցում:

2001-2004 թթ. սովորել է Գյումրիի հոգևոր ընծայարանում:

2004-2006 թթ. սովորել է Գևորգյան հոգևոր ճեմարանում:

2006 թ. սովորել է Գյումրիի ռազմական խոհարարական դպրոցում:

2006-2008 թթ. ծառայել է ՀՀ ԶՈՒ-ում:

2009-2012 թթ. ուսումը շարունակել եւ ավարտել է Գևորգյան հոգևոր ճեմարանը:

2010 թ. դեկտեմբերի 25-ին ձեռամբ Գերաշնորհ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանի ձեռնադրվել է սարկավագ:

2012 թ. հուլիսի 12-ին նշանակվել է Սեւանի Վազգենյան դպրանոցում՝ որպես վերակացու՝ միեւնույն ժամանակ դասավանդելով «Վարք սրբոց» առարկան:

2012 թ. դեկտեմբերի 29-ին ամուսնացել է:

2013 թ. հունվարի 21-ին ծառայությունը շարունակել է Հառիճավանքի Թ-րբանճյան ընծայարանում՝ որպես վերակացու՝ միեւնույն ժամանակ դասավանդելով «Եկեղեցական երաժշտություն» առարկան:

2014 թ. պաշտպանել է մագիստրոսական թեզ՝ «Աբրահամ արքեպիսկոպոս Ասպապատեցու մատենագրական ժառանգությունը» թեմայով:

2014 թ. փետրվարի 27-ին ձեռամբ Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ՈՍԿԱՆ ՔԱՀԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(ավագանի անունը՝ Անդրանիկ)

Ծնվել է 1989 թ. սեպտեմբերի 4-ին Էջմիածին քաղաքում:

1996-2006 թթ. սովորել է Էջմիածնի Ռ. Պատկանյանի անվան թիվ 9 միջնակարգ դպրոցում:

2002-2006 թթ. սովորել է Էջմիածնի Մ. Եկմալյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցում:

2006-2008 թթ. սովորել է Սեւանի Վազգենյան հոգևոր դպրանոցում:

2008-2012 թթ. սովորել եւ ավարտել է Գևորգյան հոգևոր ճեմարանը:

2010 թ. դեկտեմբերի 25-ին ձեռամբ Գերաշնորհ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանի ձեռնադրվել է սարկավագ:

2012 թ. հուլիսի 12-ին նշանակվել է Մայր Աթոռի Պաշտոնական մամուլի բաժնում՝ որպես գործավար-քարտուղար:

2012 թ. օգոստոսին պաշտպանել է մագիստրոսական թեզ՝ «Մեծացուցէ շարականը հայրաբանական գրականության մեջ» թեմայով:

2012 թ. դասավանդել է Գեորգյան հոգևոր ճեմարանում «Եկեղեցական երաժշտություն» առարկան:

2012 թ. դեկտեմբերի 22-ին ամուսնացել է:

2014 թ. փետրվարի 27-ին ձեռամբ Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ԱՏՈՄ ՔԱՀԱՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

(ավազանի անունը՝ Ռոբերտ)

Ծնվել է 1962թ. մայիսի 19-ին ք. Երևանում:

1969-1977 թթ. սովորել է Հայկ Գյուլիքյոխվյանի անվան թիվ 103 միջնակարգ դպրոցում:

1977-1980 թթ. սովորել է ք. Աբովյանի թիվ 30 միջնակարգ մասնագիտական ուսումնարանում:

1980-1982 թթ. ծառայել է ԽՍՀՄ բանակում:

1982-1983 թթ. աշխատել է Երևանի ավտոգործարանում:

1983-1984 թթ. աշխատել է Հայկինոպրոկատի Երևանյան բաժանմունքում:

1984-1987 թթ. հեռակա կարգով սովորել է Երևանի սննդի տեխնիկումում:

1984-1987 թթ. աշխատել է Երևանի հացի կոմբինատում:

1988-1994 թթ. աշխատել է «Սալբի» ՍՊԸ-ում:

1995-1996 թթ. ծառայել է ՌԴ բանակի Երևանի կայազորում:

1996-2004 թթ. աշխատել է Երևանի «Զատիկ» մանկապանը:

2002-2005 թթ. հեռակա կարգով սովորել է Հայկական Բաց Համալսարանի իրավագիտության ֆակուլտետում և ստացել իրավագիտության բակալավրի աստիճան:

2004-2011 թթ. աշխատել է «Աղեքս» ՓԲԸ-ում:

1990-2002 թթ. երգել է «Նարեկ» արական երգչախմբում:

2004-2011 թթ. երգել է «Հովեր» կամերային երգչախմբում:

1990 -ից պարբերաբար երգել է Խոր Վիրապի վանքում:

1995 թ.ից աշխատել է Երևանի Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցում որպես երգիչ:

2009 թ. դեկտեմբերի 24-ին ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի ստացել է ուրբաթի դպիրի աստիճան:

2011 թ. փետրվարից սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեորգյան Հոգևոր Ճեմարանի «Քահանայից պատրաստման լսարանում»:

2013 թ. դեկտեմբերի 24-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի ձեռնադրվել է սարկավագ:

2014 թ. փետրվարի 27-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ԱԲԵԼ ՔԱՀԱՆԱ ՔԱՐՏԱՇՅԱՆ

(ավազանի անունը՝ Վահրամ)

Ծնվել է 1972 թ. փետրվարի 18-ին ք. Դիլիջանում:

1979-1989 թթ. սովորել է Դիլիջանի թիվ 3 եւ Երեւանի թիվ 134 միջնակարգ դպրոցներում:

1989-1996 թթ. սովորել է Երեւանի Ժողովրդական տնտեսության պետական ինստիտուտում:

1997-1999 թթ. ծառայության փոխարեն աշխատել է Այգեձորի միջնակարգ դպրոցում:

1999-2001 թթ. Քրիստոնեության 1700-ամյակի տոնակատարություններին աշխատել է «Քրիստոնյա Հայաստան» հիմնադրամում որպես մարկետինգի բաժնի ղեկավար:

2001-2002 թթ. «Փիս Քորփս» միջազգային կազմակերպությունում աշխատել է անվտանգության բաժնի պետ:

2002-2007 թթ. «Վիմպել» ՍՊԸ գործադիր տնօրեն:

2007-2010 թթ. «Վիկառ Ա» ՍՊԸ կոմերցիոն տնօրեն:

2011 թ.-ի փետրվարից սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի «Քահանայից պատրաստման լսարանում»:

2013 թ. դեկտեմբերի 24-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի ձեռնադրվել է սարկավագ:

2014 թ. փետրվարի 27-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ԱԲԳԱՐ ՔԱՀԱՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

(ավազանի անունը՝ Դավիթ)

Ծնվել է 1975 թ. դեկտեմբերի 5-ին ք. Երեւանում:

1982-1992 թթ. սովորել է Երեւանի թիվ 134 միջնակարգ դպրոցում:

1993-1996 թթ. սովորել է Գյումրիի Հոգեւոր Ընծայարանում:

1996-2001 թթ. սովորել է Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանում:

1997թ. ձեռամբ Գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանի ստացել է դպրական աստիճան:

2001-2004 թթ. սովորել է ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետում:

2001-2011 թթ. ծառայել է Աբովյան քաղաքի Ս. Ստեփաննոս եկեղեցում:

2011-2014 թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի «Քահանայից պատրաստման լսարանում»:

2013 թ. դեկտեմբերի 24-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի ձեռնադրվել է սարկավագ:

2014 թ. փետրվարի 27-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ՎԱՀԱՆ ՔԱՀԱՆԱ ՀԵԲՈՅԱՆ

(ավազանի անունը՝ Կարեն)

Ծնվել է 1976 թ. ապրիլի 24-ին ք. Երեւանում:

1983-1992 թթ. սովորել է Մ. Մեծարենցի անվան թիվ 146 միջնակարգ դպրոցում:

1992-1995 թթ. ուսումը շարունակել է թիվ 5 գեղարվեստի ուսումնարանում եւ ստացել փայտի գեղարվեստական մշակողի որակավորում:

1995 թ. դեկտեմբեր ամսին ձեռամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի ստացել է դպրության աստիճան:

2001-2002 թթ. ղեկավարել է Ապարան քաղաքի արվեստի թիվ 2 դպրոցի մանկական երգչախումբը:

2008 թ. ավարտել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասական վոկալ բաժնի Նուսե Հակոբյանի դասարանը:

2008 թ. աշխատել է Երեւանի Մ. Մալունցյանի անվան թիվ 2 արվեստի դպրոցում որպես երգի դասատու:

2011 թ. փետրվարից սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի «Քահանայից պատրաստման լսարանում»:

2013 թ. դեկտեմբերի 24-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի ձեռնադրվել է սարկավագ:

2014 թ. փետրվարի 27-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ՀԱՄԱՍԱՍՊ ՔԱՀԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

(ավազանի անունը՝ Հրայր)

Ծնվել է 1978 թ. հոկտեմբերի 10-ին Գորիս քաղաքում:

1984-1995 թթ. սովորել է տեղի թիվ 4 միջնակարգ դպրոցում:

1995-1999 թթ. ուսանել է ԵՊՀ Ռադիոֆիզիկայի ֆակուլտետում, ստացել բակալավրի աստիճան:

1999-2001 թթ. ծառայել է ՀՀ ԶՈՒ-ում եւ զորացրվել կրտսեր սպայական կոչումով:

2001-ից աշխատել է առեւտրի բնագավառում, շարունակելով գործուն մասնակցություն բերել եկեղեցական կյանքին:

2010 թ.-ին մասնակցել է համակարգչային ծրագրավորման դասընթացների:

2011-2014 թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի «Քահանայից պատրաստման լսարանում»:

2012 թ. ձեռամբ Գերաշնորհ Տ. Գեորգ եպիսկոպոս Սարոյանի ստացել է ուրարակիր դպիրի աստիճան:

2013 թ. դեկտեմբերի 24-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի ձեռնադրվել է սարկավագ:

2014 թ. փետրվարի 27-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ՀՈՎԱԿԻՄ ՔԱՀԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(ավազանի անունը՝ Զավեն)

Ծնվել է 1981թ. ապրիլի 25-ին Արարատի մարզի Լուսառատ գյուղում:

1987-1997 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1998 թ. ընդունվել է ք. Սեւանի Վազգենյան Դպրանոցը՝ 2003թ. կիսատ է թողել ուսումը:

2005-2009 թթ. սովորել է ք. Հրազդանի հումանիտար համալսարանում:

1996.-ից ծառայում է Խոր Վիրապ վանքում:

2006-2010 թթ. աշխատել է «Ռազ եւ Արտակ» ՍՊԸ-ում որպես տնօրեն:

2011-2014 թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեորգյան Հոգեւոր Ճեմարանի «Քահանայից պատրաստման լսարանում»:

2012 -ին ձեռամբ Գերաշնորհ Տ. Գեորգ եպիսկոպոս Սարոյանի ստացել է ուրարակիր դպիրի աստիճան:

2013 թ. դեկտեմբերի 24-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի ձեռնադրվել է սարկավագ:

2014 թ. փետրվարի 27-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 27-ին Գեորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ հանդիսություն՝ նվիրված Սրբոց Վարդանանց զորավարների տոնին:

Ցերեկույթը կազմակերպվել էր Գեորգյան հոգեւոր ճեմարանի եւ Երեւանի պետական համալսարանի ուսանողների կողմից: Միջոցառմանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Գեորգյան հոգեւոր ճեմարանի եւ ԵՊՀ դասախոսներ, Հայաստանի տարբեր ԲՈՒՀ-երի ուսանողներ:

Հանդիսությունը բացվեց Տերունական աղոթքով, հնչեցին ՀՀ եւ Գեորգյան հոգեւոր ճեմարանի օրհներգերը, ապա բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի հոգեւոր

կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Գեորգ եպիսկոպոս Սարոյանը՝ ուրախություն հայտնելով, որ արդեն հինգ տարի է, ինչ ճեմարանն ու Երեւանի պետական համալսարանը միասնաբար են ոգեկոչում Վարդանանց անմահ նահատակների հիշատակը: «Վարդանանց ոգեկոչումը հայ ազգի համար ավելին է, քան տոնը. ժողովուրդն անմահացրել է Վարդանանց հիշատակը, այն դարձրել իր դարավոր պայքարի հիմնը», - նշեց տեսուչ Սրբազանը:

Ներկաներին այս առիթով ողջունեց նաեւ Երեւանի պետական համալսարանի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամ Սիմոնյանը: Վերջինս հույս հայտնեց, որ Վարդանանց տոնի հետ կապված ամենամյա հանդիպումները կդառնան գեղեցիկ ավանդույթ ոչ միայն Մայր Եկեղեցու եւ Երեւանի պետական համալսարանի, այլեւ՝ ողջ հայ երիտասարդության համար, քանի որ այս ավանդույթի հիմքում դրված է Վարդանանց անմահ քաջերի եւ հերոսների հայրենասիրությունը, նրանց հավատարմությունը Եկեղեցուն, Մայր հայրենիքին եւ ժողովրդին: Տիար Սիմոնյանը կարեւորեց նմանատիպ միջոցառումների դերը՝ դրանք դիտարկելով որպես մեծ գործերի մի փոքր օղակ՝ մեր երիտասարդությանը բերելու դեպի հավատք, դեպի Ազգային Եկեղեցի, դեպի հայրենիքը փրկող հերոսների օրինակը:

Միջոցառման մասնակիցներին Վարդանանց քաջամարտիկ նահատակների մասին բանախոսություն ներկայացրեց բանասիրական գիտությունների թեկնածու, Գեորգյան հոգեւոր ճեմարանի ուսումնական գծով փոխտեսուչ Գեորգ Մադոյանը: Հանդիսության ընթացքում Վարդանանց խորհուրդն ամփոփող հոգեւոր ու հայրենասիրական երգերով հանդես եկան Գեորգյան հոգեւոր ճեմարանի եւ Երեւանի պետական համալսարանի երգչախմբերը, ներկայացվեցին Ավարայրի հերոսներին նվիրված բանաստեղծություններ:

Հանդիսության ավարտին ներկաներին իր պատգամն ու օրհնությունը բերեց Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ գոհություն հայտնելով Աստծուն, որ այսօր Վարդանանց տոնը տոնախմբվում է ոչ միայն Սփյուռքի մեջ՝ ազգային մեր հաստատություններում, այլ նաեւ Մայր հայրենիքում, հոգեւորականների, ճեմարանի սաների եւ համալսարանական ուսանողների հետ: Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ ապագային Վարդանանց տոնը կնշվի ամենուրեք, որովհետեւ դարեր շարունակ Վարդանանց ոգին է առաջնորդել հայ ժողովրդին եւ զորություն տվել՝ դիմակայելու կյանքի բոլոր դժվարություններին եւ կերտելու հայոց պատմության հաղթանակները:

«...Այսօր, երբ մենք հպարտությամբ անդրադառնում եւ նշում ենք Սարդարապատը կամ արցախյան հերոսամարտի հաղթանակը, բոլորս աներկբայորեն ընդգծում ու հաստատում ենք, որ այդտեղ, այդ պատերազմի դաշտում, ինչպես Սարդարապատում, այնպես էլ Արցախում, փայլատակեց, ճառագեց Վարդանանց ոգին: Այդ ոգին ապրել եւ ուղեկցել է մեր ժողովրդին բոլոր ժամանակներում՝ դժվարությունների թե ձեռքբերումների ժամանակաշրջանում: Այսօր էլ հույժ կարեւոր է, որ Վարդանանց ոգին, Վարդանանց գիտակցությունը բնակություն հաստատի մեր մեջ, որ առաջնորդողը լինի յուրաքանչյուրիս եւ կերտողը մեր կյանքի ընթացքի:

Այսօր էլ մեր երկրի եւ մեր ժողովրդի առջեւ ծառացած են բազում մարտահրավերներ՝ սոցիալ-տնտեսական դժվարություններ, շրջափակում, արցախյան պատերազմի վերսկսման վտանգ, ազգային արժեքների տկարացում, հոգեւոր կյանքի զորացման անհրաժեշտություն: Այս բոլոր մարտահրավերների առջեւ մենք կկարողանանք հաղթությամբ ելնել, եթե մեզ առաջնորդող ունենանք Վարդանանց հերոսական ոգին, Վարդանանց բարձր գիտակցությունը, սերը՝ առ Աստված եւ սերն առ հայրենիք: Եթե մենք սիրենք մեր Եկեղեցին Վարդանանց սիրով, մենք երբեք մտահոգություն չենք ունենա հոգեւոր եւ բարոյական արժեքների առնչությամբ, որ դրանք հեստընթաց են ապրում մեր կյանքում: Եթե մենք սիրենք մեր հայրենին, մեր երկիրը, մեր հողը Վարդանանց սիրով, մեր կյանքից, մեր հայրենիքի եզերքներից կհեռանան եւ՛ աղքատությունը, եւ՛ ամեն տեսակի նեղություն, եւ՛ ամեն արատավոր երեւույթ, որոնք այսօր մտահոգում են յուրաքանչյուրիս՝ պարզ հայորդուց մինչեւ պետական իշխանավոր: Ուրեմն՝ մեր պատգամն է եւ հորդորը, որպեսզի ապրենք՝ մեր հոգում կրելով Վարդանանց սուրբ հիշատակը, այն պատվիրանները, այն պատգամները, այն նվիրական տեսիլքը, ի սեր որոնց Վարդանանք իջան Ավարայրի դաշտ եւ այնտեղ նահատակության փառքի պսակն ընդունեցին», - մասնավորապես նշեց Վեհափառ Հայրապետն իր խոսքում:

Վերջում Նորին Սրբությունը երիտասարդներին պատգամեց լինել մեր ժամանակների «Վարդանանք»-ը՝ իրենց արիությամբ, սիրով ու հանձնառությամբ: Վարդանանց տոնի կապակցությամբ իր շնորհավորանքները բերելով ազգի բոլոր զավակներին, ում անվանակոչության տոնը Վարդանանց հիշատակի օրն է՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Ս. Վարդանանց բարեխոսությամբ Աստծո օրհնությունը հովանի լինի հայոց ազգի վրա՝ ընթանալու դեպի հաղթական, շեն, բարօր ու պայծառ ժամանակները մեր կյանքի:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Փետրվարի 28-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Համահայկական ձմեռային առաջին խաղերի մասնակիցներին՝ ուղեկցությամբ Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Զաքարյանի:

Զրույցի սկզբում տիար Իշխան Զաքարյանն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց Համահայկական խաղերի անցած ճանապարհը եւ ձմեռային խաղերի ընթացքը՝ ընդգծելով, որ տարեցտարի մեծանում է մարզիկների քանակը, որոնց սրվար մասն առաջին անգամ է այցելում Հայաստան, ծանոթանում հայրենիքի պատմությանը, շփվում հայրենաբնակ հասակակիցների հետ:

Այնուհետեւ ներկաներին իր օրհնությունն ու գնահատանքը բերեց Ամենայն Հայոց

Կաթողիկոսը: Նորին Սրբությունը փաստեց խաղերի կարեւորությունը նախ եւ առաջ Մայր հայրենիքում հայության համախմբման տեսանկյունից, քանի որ դրանց շնորհիվ հազարավոր հայորդիներ հաղորդ են դառնում հայրենիքի կյանքին, մեր անցյալի պատմությանը, սրբություններին եւ զորացած ու գոտեպնդված վերադառնում են իրենց երկրները: Վեհափառ Հայրապետը նկատեց, որ այս խաղերը այնքանով, որքանով նպաստում են մարմնի զորացմանը, նույնքանով էլ հայրենիք այցելությամբ խթանում են հոգեւորի զորացմանը: «Այս խաղերի միջոցով կերտվում է մեր ժողովրդի միաբանությունը: Եւ այդ միաբանությունն իր առանցքն ունի Մայր հայրենիքում, որի տերը դուք եք եւ յուրաքանչյուր հայորդի՝ ուր էլ որ ապրի, ուր էլ որ գտնվի: Այս գիտակցությունն է կրթվում եւ կերտվում համահայկական խաղերի արդյունքում», - ասաց Հայոց Հովվապետը:

Վերջում ասփվածահաճո եւ ազգաշեն գործի համար Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց խաղերի կազմակերպիչներին՝ հորդորելով ավելի ընդարձակել աշխարհագրական ընդգրկումը: Հայոց Հայրապետը մաղթեց երիտասարդներին, որ Ս. Էջմիածնի օրհնությունը նորանոր ներշնչանքներ պարգեւի նրանց՝ ազգային իրենց կյանքն արդյունավորելու գեղեցիկ իրագործումներով, իսկ Համահայկական խաղերի օրերին ամենքը ճաշակեն հաղթանակի քաղցրությունը, ապրեն սիրով եւ միշտ շաղկապված մնան Հայաստանի հետ:

Հանդիպմանը ներկա էին նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանն ու լուսարարապետ Գերաշնորհ Տ. Հովնան եպիսկոպոս Հակոբյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

«ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆԻ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ

Պերճ սրկ. Լյուլեճյան (Կանադայի թեմ)

Լ.ԱՆՋԱԽԱՉ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ

Ենովք քհն. Եսայան (Բանակ)
Սամվել քհն. Սարգսյան (Բանակ)
Գնել քհն. Գաբրիելյան (Գերմանիայի թեմ)
Այգիկ քհն. Հովհաննիսյան (Գերմանիայի թեմ)
Հրաչ քհն. Պիլիճի (Գերմանիայի թեմ)
Տիրատուր քհն. Հակոբյան (Գեղարքունյաց թեմ)
Հեթում քհն. Թարվերդյան (Ռումինիայի թեմ)
Ռաֆայել քհն. Խաչիկյան (Սյունյաց թեմ)
Գաբրիել քհն. Վարդանյան (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)
Ղեւոնդ քհն. Տյոմկին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)
Հարություն քհն. Պետրոսյան (Շիրակի թեմ)

ԾԱՂԿՅԱ ՓԻԼՈՆ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ

Ստեփանոս քհն. Մարգարյան (Գուգարաց թեմ)
Վահան քհն. Ազարյան (Գուգարաց թեմ)
Անուշավան քհն. Կոշեցյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Դանիել քհն. Բաղումյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Զաքարիա քհն. Ավետիսյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Վարդան քհն. Գափոյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Եսայի քհն. Արթենյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Հուսիկ քհն. Հարությունյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Մկրտիչ քհն. Մուշաղյան (Արմավիրի թեմ)
Նարեկ քհն. Ղուշչյան (Վիրահայոց թեմ)
Սամվել քհն. Թորոսյան (Վիրահայոց թեմ)

ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ

Հրաչ քհն. Մուրադյան (Բուլղարիայի թեմ)
Վարդգես Գուրոյան (ԱՄՆ Արեւմտյան թեմ)
Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ եկեղեցու համայնք (ԱՄՆ Արեւմտյան թեմ)
Եղեմի Ս. Աստվածածին եկեղեցու Տիկնանց միություն (ԱՄՆ Արեւմտյան թեմ)